ՆՈՐ-ԴԱՐ

№ 179 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ_արաթ 28 Հոկտեմբերի **1889** Հ_արաթ 28 Հոկտեմբերի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 179

արիևան 10 բուբլի, վեց ամիս՝ 6 բուբլի, երեք ամիս՝ 3 բ. 50 կ., ամիսը՝ 1 բ., հատ՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գառն 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ

ԵԿԱՏԵՐԻՆԷ ՋԱՔԱՐԵԱՆ ԹԱՑԻՐԵԱՆՑԸ, ԻՒ ՈՐԴԻՔԸ՝ ՔՐԻՍՏԱՓՈՐ ԵԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ և դստերքը յաւօք սրտի յայտնելով առաջինը ամուսնոյ և վերջիններք հօր՝ Հոյլեծոսէ ազգանէ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՂԱԶԱՐԵԱՆ ԹԱՑԻՐԵԱՆՑԻ մահուան մասին, խոնարհաբար խնդրում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին յարգել հանգուցեալոյ լիշատակը և շնորհ բերել Հոկտեմբերի 29-ին, կիրակի առաւօտեան ժամը 9-ին իւր սեպհական տունը, որ գտնւում է Էքզարխեան հրապարակի վրայ, որտեղից հանգուցեալոյ մարմինը կը տանուի Սուրբ Նշան եկեղեցին։ Ամբիծքը կատարուելու են ուրբաթ և շաբաթ երեկոյեանները 6 ժամին։ Թաղումը կը լինի Կիրակի հայոց եկեղեցւոյ բակումը։
3—2

ՔՐՈՆԻԿՈՆ

ՊՕՐՏԼԷՆԴԻ ՀԵՐՑՈԳԸ

(Անգլիական ժամանակակից պատմական զրոյց)։

—

Պօրտլէնդի Բիւհարդ երիտասարդ հերցոգը գեռնորերումս յայտնի էր ամբողջ Անգլիային իւր առատապէսական հարստութեամբ, գեղեցկութեամբ, իւր ազնիւ ձիերով, որոնք ձիարշաւների ժամանակ միշտ ամենագլխաւոր մրցանակներն էին ստանում. նա առաւել նա յայտնի էր իւր դիշերային խնջոյքներով, որոնք թագաւորութեան համարեա բոլոր երիտասարդներին գրաւում էին դէպի նրա ազնիւ ամբոյշները։ Հինգ տարի առաջ նա գնաց դէպի արևելք, ճանապարհորդեց մի ամբողջ տարի, ապա վերադարձաւ կրկին Անգլիա և այն օրից այլ ևս ոչոք Նրան չէր տեսնում։ Նա փակուեց իւր ամբոցներից միմիայն և ոչոքի չէր ընդունում։ Նրա բազմաթիւ ընկերները չէին կարողանում հասկանալ, թէ ինչը ստիպեց

ՄՕԶԴՈԿԻՑ.—Այս տարի Մօզդոկը բաւականին բախտաւոր է, որովհետև արժանացաւ երկու հոգևոր առաջնորդի տեսութեան։ Սեպտեմբերի 26-ին այցելեց Աստրախանի և Կովկասի հայոց թեմական առաջնորդը և մխիթարեց մօզդոկեցիներին, իսկ հոկտեմբերի 17-ին, հայոց և ռուսաց եկեղեցիների զանգակների անընդհատ զօղանջիւնը աւետեց Թերէքեան նահանգի ռուսաց թեմական առաջնորդի մուտքը Մօզդոկ։ Ժողովուրդը սաստիկ ուրախ էր՝ տեսնելով հոգեւոր մխիթարիչների եռանդը։

18-ին սրբազան հայրն այցելեց ռուսաց դպրոցները, եկեղեցիները և արժանացրեց իւր տեսութեան ս. Ստեփաննոսի հայոց եկեղեցին ևս։ Այդ ժամանակ հայոց և ռուսաց եկեղեցիների զանգակների ցնծալից զօղանջիւնը աչխարհը էր առել։ Ժողովրդի խուռն բազմութիւնը հետևում է սրբազանին՝ օրհնութիւն, օրհնութիւն առնելու։ Եկեղեցի մտաւ թէ չէ, բազմութիւնն էլ ներս խուժեց։ Սրբազանը մանրազննին դիտեց եկեղեցու չէնքը, բարձրացաւ սեղանը, ապա սեղանից իջնելով տեսանը մի սրտաբուղխ քարոզ տուաւ՝ ի խաղաղութիւն, ի միութիւն և ի սէր յորդորելով ժողովրդին։ Մանաւանդ չատ զեղեցիկ մեկնեց Աւետարանի այս կտորը. «Կը գայ ժամանակ, և չատ հեռու չէ այդ ժամանակը, որ արտի մէջ որոմներ ցանողները կը բարձրանան մէջ տեղից, աչխարհի մէջից չարը կը վերանայ և բոլորս կը լինինք մի հօտ և մի հովիւ. մենք ունինք մի հոգևոր գլուխ՝ Յիսուսը, և ի մի պիտի

երիտասարդ հերցոգին հեռանալ աչխարհից և կարծում էին, թէ նրա վրայ քուն է եկել, որը չուտով կանցնի. բայց անցնում էին չարաթներ, ամիսներ և տարիներ, բայց հերցոգը չէր հեռանում իւր ամրոցից։ Ինքը Վիկտորիա թագուհին վերջապէս հրամայեց տեղեկութիւն տալ իրեն լօրդի մասին, բայց նա էլ երկար սպասեց պատասխանին։

Պալատական ընդունելութեան երեկոներից մինի ժամանակ թագուհին սովորականից աւելի մեծ պալատում, իւր մերձաւորների չրջանում։ Նա բազմած էր բազկաթոռի վրայ. նրա ոտքերի մօտ, աթոռի վրայ նստած էր նրա ընթերցողուհի-դեղեցկուհին, կարմրահեր Հէղինէ Դ...դը։ Երբ թագուհին արդէն պատրաստում էր հեռանալ իւր առանձնասենեակը, օրագրի սենեկապետն ընթերցողուհուն մի ծրար յանձնեց, սև կնքով կնքած։ Միսս Հէղինէն կոտրեց կնիքը, կարդաց նամակը, զունատուեց և նամակը լուռ թագուհուն տուեց։ Թագուհին կամենում էր առնասարութեամբ վերաբերուել այդ նամակին, բայց չուտով նրա երեսի վրայ էլ նչմարուեց

զարմանք. նա ջղային չարժումով նամակը մօտեցրեց մոմին, վառեց այն և սրամտութեամբ վայր ձգեց յատակի վրայ։

—Պարոններ,—ասաց թագուհին փոքր լռութիւնից յետոյ, դառնալով իրենց շրջապատող պալատականներին, — դուք այլ ևս երբէք չէք տեսնիլ մեր դեղեցիկ Պօրտլէնդի հերցոգին. մենք արձակում ենք նրան իւր թէ պալատական և թէ պարլամենտական պարտականութիւններից։ Մի խոր զաղանիք տիրապետ է նրան մինչև հեռու մնալ աչխարհից, և մենք կամենում ենք, որ դուք մոռանաք նրան։

Վիկտորիա թագուհին բարձրացաւ իւր բազկաթոռից և պատրաստւում էր հեռանալ, երբ յանկարծ նկատեց, որ իւր սիրելի ընթերցողուհին անչարժ նստած է իւր աթոռի վրայ։

—Հէղինէ, ինչ պատահեց քեզ,—հարցրեց թագուհին յատակցարար։

Բայց միսս Դ...դը չկարողացաւ պատասխանել, նա ուշաթափուած էր. մօտ վազեցին պալատական կանայք և ձեռքերի վրայ դուրս տարան նրան ընդունելարանից։

* * *

Վիկտորիա թագուհու ընդունարանի մէջ պատահած անցքից յետոյ անցել էր մի ամբողջ տարի։ Պօրտլէնդի հերցոգի ամրոցում լինում էր ամեն տարի մեծ գումարի արժանիներ, ազգանի ախոյաններ և չատ ուրիշ բաներ են տանում։

—

Թիֆլիսի Նոր-Հէյնդիա թաղում պաշտօնաթող կօլէժ. ասեսօրի աղջիկ Օ. Լ-ն մահացած է զանուել իւր սենեակում։ Կարծում է, որ թունաւորուել է։ Մօտը աթոռի վրայից վերցրել են հետեւեալ տոմակը։ «Մեծ մեղք գործելից... սարսափում եմ... խնդրում եմ քրիստոնէական կարգով թաղել»։

—

Մի լհացին, Ստանիսլաւ Միցկևիչ անունով, որ ուսումնասիրած է Չինաստանի թէյի անկարանները, նոյնպիսի անկարաններ է հաստատել նաև Կովկասում և, «Kurjer Warzaw»-ի ասելով, լաւ արդիւնք է սացել։ Նա արդէն իւր անկարաններից ստացած թէյը, որ իբրև թէ ոչնչով պակաս չէ չինական թէյից, ուղարկել է Պետերբուրգ, Մոսկուա, Վարչաւ, Երևի վաճառահանելու համար։

—

ՈՇՏԱՐԱԿԻՑ.—Այտեղի խաղողի սակաւութեան պատճառով խաղաւարը (30 պուդ) ծախւում էր 30 բ., ցորենի խաղաւարն ծախւում է 30 բ., իւղի պուդն հատ՝ 12 բ., բրնձի պուդը 2 բ. և 2 բ. 30 կ.։ Այս տարի ծառի պտուղները, ինչպէս տանձ, խնձոր, չատ առատ է. համեմատելով միւս տարիների հետ կէս գնով է ծախւում։

Անդրկասպեան երկաթուղու կառավարիչը Պետերբուրգում խնդիր է յարուցել Ախալքալաքում ամեն տարի տօնավաճառ կազմելու մասին։ Այդ տօնավաճառը, մայրաքաղաքի թերթերի ասելով, կլինի ապրիլի մէջ, Բաղուի տօնավաճառից փոքր ինչ առաջ։

—

Անդրկովկասեան երկաթուղին կառավարութեան ձեռքն անցնելուց յետոյ կրկին երկաթուղային Ելախ կայարանի տեղափոխութեան խնդիրն է յարուցել։ Ինչպէս յայտնի է, Ելախը ցած տեղ չինուած լինելով, ամեն տարի ենթարկւում է, Կուրի յորդանալու միջոցին, ողողման, որից թէ նիւթական

ծանրաբարոյ լօրդեր և երիտասարդ ջենթլ (ֆրանտ, պէնսաէր)։ Հիւրերն ամրոցում այնպէս ազատ էին, ինչպէս իրենց տանը, բայց երբէք չէին հանդիպում տան տիրոջը։

Եթէ դիշերային այդ խնջոյքի ժամանակ զուարճացողներից մինը գաղտնի դնար ամրոցի ծառաստանի այն ծառուղին, որը ամրոցից դէպի ալէկոծուող ծովի ափն է տանում, նրա առաջ կը ներկայանար մի այնպիսի պատկեր, որը կը խլէր զուարճանալու բոլոր ցանկութիւնը

Դիշերային այդ ժամանակը, մութ ծառուղիով անցնում էր ամրոցից դէպի ծովափը մի բարձրահասակ մարդ, փաթաթուած լայն թիկնոցի մէջ, սև դիմակը երեսին։ Ձեռքերին նա հագած ուներ երկար ձեռնոցներ և ձեռքին վառած գլահակը երբեմն երբեմն տանում էր դէպի բերանը։ Նրա առաջից և ետևից գնում էին երկ-երկու սպիտակահեր ծառաներ, վառած լապտերները ձեռքերին, որոնցով լուսաւորում էին հերցոգի ճանապարհը. իսկ բոլորի առաջից գնում էր մի երիտասարդ ման-

ՎԱՂՎԱՆ ՑՈՒՅՑԱՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԻ

Ուրբաթ, 1-ին հոկտեմբերի 31-ը թուականին, ժամը 2 ե. 30 ր. «Ղազարեան»-ի վաճառատան մէջ պիտի ծախուին հետեւեալ ապրանքները՝

Ա. Ի. Ս. Ա. Ի. Ա. Ի. Ա. Ի

երքևում, թանը դուրս հանելու համար։ Մեզ մոտ լնոցիի միակ բնդնով թափում են ամանի մէջ թէ իւղը և թէ թանը միասին, ապա սկսում իւղը հաւաքել, որ լողում է թանի երեսին։ Մինչդեռ այդ լնոցիով առաջ քամում են թանը և ապա ցամաք իւղը դուրս հանում, որ աւելի յարմար է։ Այդ լնոցիի միւս յարմարութիւնն էլ այն է, որ մերին ի պէս չանհնարով չէ կախւում առաստաղից կամ ծառերից, այլ արդէն կախուած է երկաթի ձողակներով գոյդ եռանկիւնից չէուած մի քառոտանոյ վրայ։

Այսու ամենայնիւ թէ լնոցիի գլխաւոր և հիմնական չէնուածքը և թէ հարհրելու ձևը յար և նման է մերինին։ Հետաւոտէս եթէ Ամերիկան մեզանից չատ հեռու չլինէր, կասէիք, որ ամերիկացիները մեզանից են վերցրել իրենց լնոցիի օրինակը։

Այդ բաժնի մէջ կային և երկու հատ իւղ ցամաքեցնելու սեղաններ, մինը առանձնաւոր անուաւոր և միւսը բոլորովին պարզ։ Առաջինը մի կլոր սեղանի նմանութիւն ունի, որի երեսի կեդրոնը փոքր ինչ բարձր է իր շրջաբոլորից և անուաթևի չարժուելով պատւում է իր չորս կողմը։ Այդ շրջաբոլորի վրայ յարմարեցրած է և կլանակաձև, խոռոչաւոր մի փայտ, որ նոյնպէս պատւում է իր չորս կողմը, չարունակ սեղանի երեսին քսուելով։ Ահա այդ սեղանի վրայ դնում են լնոցիից հանած նոր իւղը, անուաթևը չարժում և սեղանի կոլոր երեսն ու կլանակը պտտելով իրենց մէջ սեղում ճմլում են իւղը, որից չուտով դուրս է գալիս մնացեալ թանը և սեղանի թևք կողմերի վրայ և նովաձևների մէջ մանելով թափւում ներքև դրած ամանի մէջ։

Մեր կողմերում անձանօթ են ոչ միայն այս ցամաքեցնելու սեղանները, այլ և նոյն իսկ իւղ ցամաքեցնելու, սկզբունքը։ Տան սիկինը թանի երեսից ձեռքով հաւաքում է իւղը, ձեռքի մէջ մի փոքր ճաճապացնում և գցում մորթէ պարկի կամ օշնակի մէջ։ Ներանցից յետոյ չինուածներն էլ նոյն ձևով հաւաքում են միմեանց վրայ, այնպէս որ մեր գիւղերում գնած իւղի մի մասը գրեթէ միշտ թան է լինում, և հալած ժամանակ մի պուդ իւղից անչուշտ մի քանի ֆունտ եփած թան է դուրս գալիս։ Այս եղանակը, ճչմարիտ է, օգնում է տգէտ գիւղացուն մի քանի ֆունտ զուտ իւղի փոխարէն—թան ծախել, բայց չատ անգամ էլ մեծապէս վնասում է իրեն, որովհետև իւղը տան մէջ մի փոքր երկար մնալով դառնանում է (կծւում) և այնուհետև էլ նրան գլխից հանել չէ կարողանում։ Եթէ այդ տեսակ սեղաններ գնելու կամ չինելու գլուխ չունին մերոնք, գոնէ պէտք է իւղը մի քանի անգամ սառը և մաքուր ջրով լաւ լուանան և այդպիսով նրան թանից բոլորովին զատելուց յետոյ միայն դնեն ամանների մէջ։

Բացի յիշեալ գործիքներն ու մեքենաներից, այս բաժնի մէջ կան նաև պահելու կամ մակարդելու պղինձներ, ամաններ, կաղապարներ և այլն և այլն, որոնց մասին մանրամասն խօսել աւելորդ եմ համարում. ըստ որում պահիր չինելու այն ձևը, որ եւրոպական է և յայտնի առաւելութիւն ունեցող պահիրներ չինելու ժամանակ է գործ դրւում, այստեղ ամփոփելու բան չէ։ Իսկ հասարակ պահիրներ մակարդելու այդտեղի եղանակը մեր կողմերում յայտնի եղանակներից չատ քիչ բանով է տարբերւում։ Սակայն չէ կարելի չնորհակալութեամբ չյիշել այն, որ այդ բաժնի յարդելի կարգադրիչներն ու կառավարողները դրեթէ ամեն ժամանակ կանչած խօսում, պատմում և բացատրում էին հետաքրքիր այցելուներին թէ այդտեղ դրուած մեքենաների և գործիքների ինչ լինելն ու ինչպէս գործադրելը և թէ իրենց գնահատն ձևով սեր գտնելու, իւղ չինելու և պահիր մակարդելու եղանակներն և միջոցները։ Այնպէս որ ցուցահանդէսի բոլոր բաժիններին մէջ կարծեցեալ անտեսութեան բաժինը մի փայլուն բացառութիւն էր կազմում միւս իւր այդ առաւելութեամբ։ Սրա վրայ պէտք է աւելացնել նաև այն, որ սոյն բաժնի վերաբերեալ մի քանի դասախօսութիւններ եղան ցուցահանդէսում։ Դասախօսում էին պ. պ. Քալանթարները և Վերեչչագինը։

Գ. Տ. Ճ.

ԵՐԿՐԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ՀԱՑԱՋԳԻՆ

—

Արտաստհանի հայ թերթերում կարդում ենք այդ վերնագրի տակ հետեւեալը. 1864 ապրիլի 1-ին Կալկաթայէն եկող նաւ մը ի Հոնկ-Քոնկ կը հանէր երիտասարդ Հայ ճամբորդ մը։

Իր անունն էր Պ. Խաչիկ Պօղոս Աստուածատուր Քաջառաղջ, կորովի, գեղեցիկ երիտասարդ մ'էր, հազիւ 20 տարեկան։ Միտքը դրած էր բախտ որոնել, և ուսումնական անհրաժեշտ պայմարին հետ, ունէր մանաւանդ ձեռնհասութիւն, առողջ գլուխ և քաջասրտութիւն, որք չատ մը ուսումնասէր աւելի զօրէ կը տեսնէին։

Այն ժամանակի Պոմպէ օվ Հինդուսթան դրամատունը մասե վաճառն տոլար (իրը 12 ռակի) ամսականով։ «Հնդկաստանի Դրամատունն» ի վաղուց դադրած մոռցուած է. բայց այն երիտասարդ գրագիր այժմ աշխարհիս ամենէն հարուստ, ամենէն ազդեցիկ Հայերէն մին է, և իր յաջողութիւնք աքանչացմամբ կը պատմուին անգլիական լրագրաց մէջ իսկ։

Հոնկ-Քոնկ Քանթոնի չինական ծովախորշին մէջ կղզոյ մը վրայ չինուած վաճառաչահ երեւելի քաղաք մ'է և անգլիական բարգաւաճ պաղտիականութիւն մը։ Քանթոն մին է այն որոչեալ չինական քաղաքներէ ուր Սերտպացիք դաշնագրով արտօնեալ են վաճառականութիւն ընելու։

Պ. Խաչիկ Պօղոս Աստուածատուր, որոյ անգլիական անունն է Գաւուարժան Գ. Փ. Զաթըր, (աղաւաղում Ծատուր մականուան), իր բախտը չինելէն զատ նաև այդ վաճառաչահ կեդրոնին բախտը չինած է. որովհետև Հոնկ-Քոնկի չինողներէն մին կը համարուի Տեղական անգլիական թերթ մը, Hong-Kong-Daily-Presse իր սեպտ. 2 թուով, Պ. Հէնրի Նորմանի ստորագրութեամբ յօդուած մը կը հրատարակէ, զոր մեծաւ գոհունակութեամբ կը ներկայացնենք մեր ընթերցողաց։

Յօդուածագիրը կ'ըսէ թէ «Քառորդ դար առաջուան վաթսուն տոլարներն այժմ միլիոններու բարձրացած են. Հոնկ-Քոնկ բոլորովին կերպարանափոխ եղած է, և Պատուարժան Զաթըր, որ ի Ծայրագոյն Արեւելս Մեծին Բրիտանիոյ առեւտրական տէրութեան ամենէն ազդեցիկ մարդը դարձած է, դլխաւոր հիմնականն է Հոնկ-Քոնկի այս կերպարանափոխութեան։

«Երբ Թղթարեր չոգենաւով Հոնկ-Քոնկ մտնէք, ցամաքի վրայ Քովլունի ծովափը կ'նկնէք, Վիքթորիա քաղաքին հանդէպ, և չոգենաւուն բնաւ մէկ օրուան մէջ կը պարպուի առանձնակութիւն չափ չքեղ մեծերանոցներէն միոյն մէջ, Այս ծովափանց և մեծերանոցայ ընկերութիւնն (Wharf and Godwn Company) Պ. Զաթըրի գործն է, որ 650,000 քառակուսի ոտք գետին կը ծածկէ, ուր Ովկիանոսի ամէն լաստը չոգենաւ միևնոյն ժամանակ կրնան մերձենալ և իրենց ապրանքը պարպել, և որ կրնայ պարունակել 100,000 տակառաչափ վաճառք, 83,000 տակառաչափ հանքածուխ և 3200 տակառաչափ լորտակ (ֆէ-ճերէյթ)։

«Երբ ցամաք եմնէք, և ձեր չորս կողմը նայիք, ձեր տեսած լաւագոյն և գեղակազմոյն չէնքերէն վեցէն հինգ Պ. Զաթըրին է, իրը չինածն է։ Պ. Զաթըր է նաև որ գրեթէ միայնակ ի գլուխ կը հանէ Քովլունի զարգացումն, ուր օր մը երկրորդ Հոնկ-Քոնկ մը պիտի բարձրանայ, քանի որ Քանթոնէ եկող երկաթուղւոյ գիծն հոն պիտի աւարտի։

«Ամենայն մանրամասնութեամբք Պ. Զաթըրի գործն է նաև Հոնկ-Քոնկի հողային բնկերութիւնը (Hong-Kong Land Investment Company), որ մօտերս հաստատեցաւ, և արդէն իր ազդեցութիւն զգալի կ'ընէ Հոնկ-Քոնկի զարգացման վրայ։

«Պ. Զաթըր էր նաև որ կանուխէն գուշակեց Թոնքինի հանքածխոյ հարստութեան գոյութիւնն, և այժմ արդ ձեռնարկութեան գործածուած գրամագլխոյ մեծագոյն մասը տուաւ։

«Ըմբռկալաբանելու համար բաւ է նչանակել թէ Պ. Զաթըր էր որ յղացաւ Փրայայի ծովեզերքը չահագործելու մեծ ծրագիրը (Praya Reclamation Scheme), զոր յօրինեց, և յաջողեցաւ ի գործ դնել, նախ Կառավարչին և չետոյ Անգլիոյ Գաղթականութեանց Նախարարին հաւանութիւնն ստանալէ չետոյ։ Այս ծրագիր անչահ հողերն ու ջուրերը չահագործելու համար գործադրուած ամենէն չանդուգն, ամենէն ընդարձակ և ամենէն հանճարեղ ծրագրոյ մին կրնայ համարուիլ։ Այս ծրագրոյ գործադրութիւն անհուն զարգացում պիտի տայ Հոնկ-Քոնկի, և հետևապէս Պ. Զաթըր իր հանճարեղ գաղափարին և ձեռներէցութեան հետ պաչտօնական հրապարակային չնորհակալութեանց արժանացաւ։ Սըր Ուիլիըմ Տէ Վէօի հետագրով Անգլիոյ Կառավարութիւնն ևս անչուչտ ուրիչ կերպով իր գնահատութիւնն և չնորհակալութիւնը պիտի յայտնէ առ Պատուարժան Պ. Զաթըր։

«Այս ծրագրով, Վիքթորիա քաղաքին ծովեզրի կողմը խորտնկ ծովուն մէջ կը մնայ երկու մղոնի երկայնութեան վրայ 250 ոտք լայնութեամբ, այնպէս որ չինուելիք ծովափունք 20 ոտք ջրոյ խորութիւն կ'ունենան։ Կառավարութիւնը մաս առ մաս պիտի չինէ, և 1892-ին պիտի ամրողջանայ, և ծովափանց մասնաւորապ պիտի վճարին իւրաքանչիւրն իւր մասին համար։ Իւր մասէն կառավարութիւնը մէկ ու կէս միլիոն տոլարի չափ մը պիտի ընդ, և բաց ասած 85,000 տոլարի տարեկան միայն եկամուտ մը պիտի ընդունի։ Բնականապէս բախտաւոր մասնատարք ևս մեծ չափեր պիտի ընեն։ Այս կերպիս ոչ նուազ քան 59 անգլիական կալի (acre) տարածութեամբ գեղին պիտի աւելնայ Գաղթականութեանս վաճառաչահ կեդրոնին վրայ, յորմէ 27 կալ պիտի յատկանան փողոցներու և հրապարակներու։ Քան և հօմն կալի տարածութեան վրայ 1,300 հատ տուներ պիտի չինուին բաղմայարկ, ուր 39,000 անձինք պիտի կարենան բնակիլ, որ ըսել է գաղթականութեանս հնգամեայ աճումն, ըստ այժմեան համեմատութեանց։ Որովհետև Հոնկ-Քոնկի գաղթականութեան աճումն ամենատնտեսական գաղթային խնդիր մը գտած է, բնակելի գեռնին այս չափազանց ամենամեծ կարևորութիւն ունի։

«Պ. Զաթըր այս ծրագիրն յղացաւ, և իր առաւ իսկ հրդեհութեամբ Կառավարչին և մասնատարց հետ և անցեալ տարի երբ ի Լոնտոն կը գտնուէր, պալմայէն նախատար Լորտ Նորթպրուքի հետ տեսակցութիւն մ'ունենալով, նորա վերջնական հաւանութիւնն ստացաւ։

«Հոնկ-Քոնկի չինողը» կորովի մարդ մ'էր իրը 45 ամեայ, Կիւսոսի մը անկարապրելի այլ դիւրաւ ճանաչելի գոհ և զուարթ դէմքով։ Իւր բարեկամական սիրալիր վարմունք չուտով ձեր չսիրտը կը գրաւեն, և հինգ վայրկեան խօսակցութեան մը չիմանաք թէ ձեր դէմն ունիք չատ պայծառ և քաջողջ իմացականութիւն մը գրաճական և տնտեսաւորական ամեն գործառնութեանց վրայ, օժտեալ այնպիսի խորաթափանց հեռատեսութեամբ որ մարգարէական ձիրքի մը կը նմանի։ Պ. Զաթըր բաւական է որ կատր մը գետնի վրայ նայի, և ապառնյին քառորդ մէկ ճարտարի տարբերութեամբ կրնայ գուշակել թէ հինգ տարի ետքն այդ գետին ինչ պիտի արժէ, եթէ գետին մը արժէքն յանկարծ բարձրանայ, (ինչպէս Քովլունի հողը պիտի լինի ի մօտոյ՝ չինական երկաթուղւոյն երկարաձգմամբ), պիտացէք որ Պ. Զաթըր տարիներ առաջ արդէն գնած է այդ գետին, «Ինչ բախտաւոր մարդ», այս բացագանչութիւն ահա կը լսենք ամեն օր ի Հոնկ-Քոնկ, բայց սա այն տեսակ բախտաւորն է որով զօրապետը ճակատամարտ մը կը չահի, կամ նաւապետն ովկիանոսներէն անդին իր նաւահանգիստը կը գտնէ։ Բայց և այնպէս Հոնկ-Քոնկի մէջ, և մանաւանդ Վիկտորիայ մէջ, «Զաթըրի բախտին» տեսակ մը պաչտօն կը տարուի։ Ինչ տեսակ արժեմուղղ զոր Պ. Զաթըր գնէ, իրենք ալ կը գնեն. ինչ ձեռնարկութիւն որ ընէ Պ. Զաթըր, իրենց գրամն ամենայն վստահութեամբ կը յանձնեն. և երբ գլուխն երեցնէ ուրիչ ձեռնարկութեան մը վրայ՝ չեն մտածեր անոր։ Անցեալներն երկու չաբաթի չափ բացակայ մնայ Գաղթականութենէս, և այն միջոցին եկաւ այն հնչակաւոր մրրիկն որ հինն ի վեր տապալեց կղզին, միլիոնաւոր տոլարի վնաս պատճառելով Մի քանի օր ետքը տեսայ չնորհքով չինացի ծերունի վաճառականի մը, որ քառորդ դարէ հետէ տան հաստատուած և հարստացած է։ Փոթորկին գործած աւերմունքը դիտելով, գլուխն երկրցուց տրամադրեն և անհոն վերադրութեամբ մ'ըսաւ Չինացին. «Պ. Զաթըր գնաց, և տեսէք ինչեր կը պատահին։ Բախտ արդարև ունի այս մարդ. դի գեռ անցեալ օր տեսայ որ ձիարշաւին մէջ առաջին և երկրորդ մրցանակները չահող ձիերն իւր ձիերն էին, բայց կարծեմ Պ. Զաթըր կը խորտի այն բանաստեղծին պէս որ աւելի քաջասրտութեան (pluck) կը հաւատայ քան բախտի (luck)։

«Եւ փէչերու բախտը Պ. Զաթըրի բախտին չափ քաջասրտութեան արդիւնք է։ Նա մշտապատրաստ է իր բոլոր հոգւով ու մարմնով ի և է ձեռնարկութեան մէջ նետուելու, բաւական է որ իւր խելքը կարէ թէ առողջ գործ է։ Օրինակի համար, անցեալ տարի Աբեշ անուն հազար տակառաչափնոց նոր չոգենաւ մը նաւագան Հոնկ-Քոնկէ Սինկափոռ գացած ժամանակ ճամբէն չեղեցաւ 200 մղոն, և գիչերային լաչողի գնաց խորտնկ առագաստ տնզ մը Անոամի ծովեզերեայ մօտ։ Հոն կը մնայ չոգենաւն, և Լոյտի գործակալն աճուրդով վաճառեց զայն Բնականապէս Պ. Զաթըր գնաց, դի այնպիսի չոգենաւ մը լուսնին մէջ իսկ տեսնէր պիտի գնէր, և ապա հարցուց նաւապետ ընկերութեան թէ յանձն կառնու առաջնակարգ (A 1) դասակարգել Լոյտի նաւագուցակին մէջ։ Ընկերութիւնը մտածեց, չատ մտածեց, դի վտանգաւոր ձեռնարկ մը կը թուէր ի վերջոյ պատասխանեց.

—Այո. 60,000 տոլարի վոխադրէն։

—Շատ է, առարկեց Պ. Զաթըր։

—Լաւ, 55,000 տոլար տուէք։

—50,000 տոլար ունիմ, կը հանձք չոգենաւը։

—Ո'չ։

—Օլռո'յթ, ես պիտի հանեմ, կը տանէք։

«Պ. Զաթըր գոյդ մը ճարտարագէտներ վարձեց, գետնի գործիքներ և չատ մը աւազի պարկեր, և նաև մը վարձեց պանդոկ Աննամ գրկելու համար։ Ես ինքս տեսայ Աբշէն այդ հետաւոր ծովեզրին վրայ, և տարակոյս չունիմ որ անհնար դուրս պիտի հանուի Յայնժամ Պ. Զաթըր 50,000 տոլարը պիտի չահի իւր քաջասրտութեամբ կամ իւր բախտով, ինչպէս որ կուզէք»։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՆՁԱԿ, 15 հոկտեմբերի.—Մինչդեռ մի կողմից եկամուտներով հարուստ ս. Ծովհաննէս եկեղեցու տղայոց և օրիորդաց դպրոցների առաջին բաժանմունքների զուգընթացները վարւում են, մինչ նոր վարչութիւնը զբաղած է անձնափոխանորդների «պաչտօնական» թէ «մասնաւոր» մարդիկ լինելու «իրաւաբանական հարցի» քննութեամբ և որոչումով...և փոխանորդ սրբազանից մեկուսացած առանձին գործել է ուզում, ըստ որում այդ վարչութեան համոզմունքով փոխանորդը հոգաբարձական գործերին խառնուելու իրաւունք չունի ամենևին... իսկ ուսումնական վարչութիւնը, որ հետևեալ ինդիրներում կազմում է միայն աւագ ուսուցիչը իւր ամուսնու հետ, թողնելով ուսումնական ներքին լուսնինդիրները, զբաղած է արտաքին և «աչքի ընկնող» բաներով՝ աչակերտուհիների չատ տարիներ առաջ որոչ և յայտնի հագուստի «ձևափոխութեամբ...» նըբանց «ծամերը ետդետէ կտրած լինելու հրամաններ արձակելով...աւագ ուսուցչի անուամբ դպրոցին դասընթացքներ տրելով. նրանց վրայ ամենաչնչին բաների մասին կառավարութեան նախագահ սրբազանին անչուչտ լսումնդակութեամբ յայտարարութիւններ գրելով... վերջապէս մինչ աւագ ուսուցիչը իւր կազմած ուսուցչական նոր խմբով, բացի ճեմարանական կրօնուսոյց պ. Խաչմանեից, որ Գեր. փոխանորդի հրաւիրով է ընդունուած կրօնի դասատութիւնը, վճիռ է կայացուում՝ մասնաւոր մարդկանց թոյլ չտալ ներկայ լինելու դասատութեան ժամանակ...,— միւս կողմից, այս տարի սեպտեմբերի. 8-ից փոխանորդ սրբազան Աղուանեանի աչխատութեամբ բացուած աննչան և միայն մի քանի հարիւր րուբլի եկամուտ ունեցող Ս. Լուսաւորիչ եկեղեցու միագամայն, երկ-երկու բաժանմունքից բաղկացած, երկսեռ դպրոցների անմեսական վարչութիւնը, ինդրատուներուն չատութեան պատճառով, բանում է մի զուգընթաց ևս օր. դպրոցում. ըստ ամենայնի համերաչխութեամբ և ձեռք-ձեռքի տուած սրբազան փոխանորդի հետ գործում և աչխատում են ապահովացնելու դպրոցների վիճակը՝ կազմել մի դրամագլուխ, որպէս զի կարելի լինի նրա տոկոսով և միւս եկամուտներով պահել միչտ գէթ միագասեան երկսեռ դպրոց՝ երեք-երեք բաժանմունքներով, իսկ ուսումնական ամբողջ վարչութիւնը, սուս ու փուս չարունակելով իւր պարտականութիւնը, միևնոյն ժամանակ մեծ ուրախութեամբ յանձն է առնում ձրիաբար դասախօսել զուգընթացի մէջ. այդ պատասխանի խումբը միաձայնութեամբ անիրաւացի համարելով ժողովրդական դպրոցների դուռը փակելու նոյն հասարակութեան առաջ, ամենայն ուրախութեամբ ներս է ընդունում դպրոցները... վիճակով հետաքրքրուող ամեն մի անհատին...

Ի՞նչ մեծ տարբերութիւն միմի և միւսի մէջ։

Գանձակի «Քիլիսաքանդ» թաղի մօտ 1100—1200 տուն հայ հատարակութիւնը, իմբուած զոլով երկու իրարից բաւականին հեռաւորութեամբ կառուցուած եկեղեցիների չուրջը, մինչև ներկայ թուականը ունէր մի երկսեռ երկդասեան զպրոց, ս. Յովհաննէս եկեղեցու անունով, օրիորդացը՝ այդ եկեղեցուց ոչ հեռի, իսկ տղայոցը նոյն իսկ եկեղեցու բակում։

Ս. Լուս. եկեղեցու ծխականները մեծ դժուարութիւնների և արգելքների հանդիպելով ս. Յովհաննէս եկեղեցու զրպրոցներն ուղարկելու իրենց որդիներանց, միաք յղայան բանալու իրենց թաղում գոյութիւն ունեցող զպրոցների մի ճիւղ։ Բայց խոչընդոտների պատահելով հարկ համարեցին մի խնդիր ներկայացնել նախկին յաջորդ Գրիգորիս վարդապետին՝ բարձրագոյն հոգ. իշխանութիւնից առանձին միաղասեան երկսեռ զպրոց բանալու թոյլտուութիւն ստանալու համար։ Իսկ որովհետև ս. Լուսաւորիչ եկեղեցին իր սուղ միջոցներով անկարող էր կառավարել բացուելիք ուսումնարանները, ուստի հասարակութիւնը միևնոյն ժամանակ խնդրեց դեր. յաջորդին՝ միջնորդել և հետևեալ արդիւնքները յատկացնելու նոյն զպրոցներին. ս. ուսումնարանապատական քարվանսարայի մշտական և հիմնաւոր տարեկան մօտ 800 րուբլի բերող արդիւնքը. ք. Ս. Գէորգ և Լուսաւորիչ եկեղեցիներից ս. Յովհաննէս եկեղեցու զպրոցներին տրուելիք 500-ական րուբլի տարեկան նպաստը և ք. Զոլագի ուխտատեղից տարեկան 70 ր. արդիւնքը։ Բացի այդ եկամուտներից հասարակութիւնը ի նկատի ունէր ուսման թոշակները մօտ 700 ր. և այլ նուիրատուներից մօտ 200 ր., ընդամենը մօտ 2800 րուբլի եկամուտ։ Այդ դուռարով, ի հարկէ, կարելի կը լինէր պահպանել միաղասեան երկսեռ զպրոցների գոյութիւնը։

Սակայն թեմ. Առաջնորդը անկարելի համարելով յատկացնել քարվանսարայի եկամուտը բացուելիք զպրոցներին, համաձայնել էր 500-ական րուբլի նպաստները տալ նրանց և, հրաման ստանալով բանալ զպրոցները, կարգադրել էր հոգաբարձուներ ընտրել։

Ս. Լուս. եկեղեցու ծխականները, տեսնելով, որ իրենց մասնացոյց արած միակ հիմնաւոր արդիւնքը անկարելի է համարեա յատկացնել բացուելիք զբպրոցներին, և այդ արդիւնքի փոխարէն էլ մի ուրիշ եկամուտ չէ տրւում, առանց որի ինքը հասարակութիւնը բոլորովին անկարող է ապահովել զպրոցների գոյութիւնը,—ուղղակի հրաժարուեց ուսումնարան բանալու դիտաւորութիւնից։ Իսկ երկիցս հոգաբարձական ընտրութիւն անելու համար նշանակուած ժամանակ, հասարակութիւնը դրականապէս մերժեց հոգաբարձուներ ընտրելու առաջարկութիւնը։

Գործն այդ դրութեան մէջ էլ մնաց մինչև այժմեան փոխանորդ Գրիգորիս սրբազանի գալուստը։

Գործին ծանօթանալուց յետոյ նորին սրբազնութիւնը ժողով կազմեց ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխականներից և մի աղտու ճառով համոզեց ծխականներին բանալ զպրոցը, որի վիճակը ապահովելու համար առաջարկեց հանգանակութիւն անել քաղաքիս հասարակութեան մէջ...։

Այդ նպատակով էլ հետևեալ կիրակի խառը ժողով կազմուեց ս. Լուս. և ս. Յովհան. եկեղեցիների ծխականներից։ Դեր. սրբազանը ուսման կարեորութեան վրայ մի դեղեցիկ ատենաբանութիւն ասելուց յետոյ՝ առաջարկեց ներկայ եղող խառն բազմութեան չորս պատուաւոր մարդ ընտրել երկու եկեղեցու ծխականներից և հանգանակութիւն սկսել յօգուտ ս. Լուսաւորիչ եկեղեցու զպրոցների։

Ամէն բանը կարգադրուելուց յետոյ որոշուեց սեպտեմբերի 8-ին զպրոցները բանալ։ Այդ օրը Աստուածածնայ ծնունդն էր և օր. զպրոցն էլ հենց այդ անունով կոչուեց։

Ս. Լուսաւորիչ եկեղեցում պատարագի ժամանակ Դեր. Սրբազանը իր սրբ տառուչ քարոզի մէջ յորդոր կարդաց ժողովրդին՝ միշտ ամեն բանից վերադասել ուսումնարանները—մեր հոգոյ և մարքի լուսատու այդ սրբարանը և ոչինչ չխնայել նրա բարգաւաճման և յարատեւութեան համար...։

Պատարագից յետոյ ազգային բազմութիւնը և զգաստացուած հոգևորական դասը ժամասացութեամբ դիմեցին եկեղեցուց մի քանի քայլ հեռի գտնուող օր. զպրոցի դահլիճը, որը զարդարուած էր Թագաւոր Կայսրի, երջանկայիշատակ Գէորգ Դ-ի, Ս. Թարգմանիչների և այլ պատկերներով, որոնք չրջապատուած էին ծաղիկներով և կանաչներով։

Պատշաճին մաղթանքներ և չարականներ ասելով օրհնեցին զպրոցը և ս. Լուսաւորիչ եկեղեցու երկսեռ զպրոցները բացուած համարեցան։ Դրանից յետ կարգացուեցան ճառեր։ Ժողովուրդը իրաւանացած տեսնելով իր փափագը՝ ուրախ սրտով հեռացաւ հանդիսավայրից։

Ցաւով ենք, որ Դեր. Սրբազանը այժ և կարողութիւն կունենայ աջողութեամբ վերջ տալու և այն մի երկու կնճռոտ հարցերին, որոնց արդէն ձեռնամուխ է եղած։

Հանգանակութեան թերթում տորագրուել և արդէն վճարել են Ս. Ափանասեան 1000 րուբլի, Եր. Եղիազոյ 400 ր., Ա. Առուշանեանց 200 ր. և մի քանի ուրիշներ։

Իսկ նոր զպրոցների կահ-կարասիքի և այլ կարիքների վրայ սրած ծախսերը ծածկելու համար՝ Դեր. թեմ. Առաջնորդը հրամայել է յանձնել զպրոցների վարչութեան զաղարեցրած աղքատանոցի գումարների այս տարուայ տոկոսը։

Գիւղացի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳԵՐՄԱՆԻԱ.—Բերլինից հաղորդում են, որ հոկտեմբերի 17-ին բացխտապի նիստում կարգացել են առաջիկայ տարուայ բիւդջէն։ Գանձարանի քարտուղար Մայրբանը յայտարարել է, որ առաջիկայում սպառում է ծախսի յատկում, մանաւանդ զինուորական վարչութեան վերաբերմամբ։ Մաքսային տուրքերը 30—40 միլիոն աւելի կը տացուին, քան ինչ որ նշանակուած է։ այդ յատկումը կառաջանայ հայտահատիկների տուրքի չնորհիւ, թէև հացահատիկների տուրքերն առաջուանից ցած է եղել։ Իսկ ինչ վերաբերում է երկրի պաշտպանութեան համար նոր բիւդջէի մէջ նշանակուած մեծ պահանջներին, այդ պատճառաբանուած է նրանով, որ «չնայելով խաղաղութեան պահպանութեան մասին ուղեցած վստահութեան, չէ կարելի ո և է միջոց անուշադիր թողնել նրա պահպանութեան համար»։

—

—Ամէնքի ժողովուրդը է պատիւ իր օգոստափառ հիւրերին, կերոնակիր հանդիսաւոր թափօր է կազմել, որի առաջից գնալիս է լինում քաղաքագլուխը։

—Վեննայի համալսարանում հոկտեմբերի 14-ին կռիւ է ծագել կաթոլիկ և զերմանական ազգային կուսակցութեան պատկանող ուսանողների մէջ։ Կաթոլիկները յաղթում են և փախչում։ Ուսանողներից չատերը վիրաւորուած են։

—Ք. Դուբն իմանալով, որ Յունաստանում պահպանութեան մոնոպատրութեան տրուելիք յետոյ պանհելլէնական յանձնախումբը զէնք և պատերազմական նիւթեր է ուղարկելու Կրետէ, վճռել է մարտական ուղարկել Կրետէի կողմերը։

—«Figaro»-ի ասելով, Լեոն XIII պապին առաջարկուած է միջնորդ լինել Բալկանեան խնդիրը լուծելու։ Կարելի է, որ նա ինքն էլ կառաջարկէ, որ այդ խնդիրը լուծելու համար մեծ պետութիւնների կոնգրէս կազմուի, կամ մի այլ միջոց կգտնէ Ռուսիայի և Աւստրիայի միջև ո և է «Modus vivendi» հաստատելու համար։

—Այժմ արդէն պարզուած է, որ Վիլհելմսհաւէնի պրինցին սպանելու փորձ առողջ Վիննեղէնցի է և պատկանում է կաթոլիկ հոգևորականի համբարութեան, անունն էլ Մարդին Միլլեր է։ Նա բողոքական է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Աղջիկ փախցնելու սովորութիւնը աւելի և աւելի ընդարձակ չրջան է ստանում։ Քիչնեւում օրինակ կարծես թէ առանձին «օջախ» է կազմուել նորատի հարստահ օժիտ ունեցող աղջիկներ փախցնելու։ Վերջին ժամանակներս փախցրել են մի գիմնազիստի մի քանի աչակերտուհիներ, բոլորն էլ մինչև 16 տարեկան։ Մատերքս «գողացել» են նաև մի այլ կնոջ աղջիկան։ Հարուստին տաք բնաւորութեան զոհերը չատ չուտով ղղջում են իրենց չտապալ գործած քայլի համար, բայց բանն արդէն, ըստ սովորականին, անուղղելի է մնում։

*** Պարսից Շահը Լոնդոնի «Times» թերթի թղթակից Բլոմֆիլդին «Արեգ և Առիւծ»-ի չքանչանի առաջին աստիճանն է չնորհել։

*** Աւստրիայում հրատարակուած է ամեն տեսակ պաշտօնեաների համար նըչանակուած համազգեստների մանրամասն նկարագիրը։ Բոլոր պաշտօնեաները բաժանում են 11 դասի և տորադասերին։ Առաջին դասին պատկանում է մինիստրների խորհրդի նախագահը, իսկ մինիստրները երկրորդ դասի առաջին տորադասում են հաչուած։

*** Պարիզի դիտութեան ճեմարանը Լեկօնտի մրցանակը տուել է ֆրանսիական անծանօթ վաստակի հնարող Վիէլիլին։ Այդ մրցադրամը, որ 50,000 ֆրանկ է, իւրաքանչիւր 3 տարին մի անգամ է տրւում։

*** «Kölnische Zeit.»-ը անդադար գանուելց իւր ֆէյլիետոնական բաժնում հրատարակելով մի մեծ վէպ, որի վերջում հերոսն ու հերոսուհին ինչ-ինչ տարաձայնութիւնների պատճառով բաժանում են միմեանցից։ Լրագրի կարգացողներից բաղմաթիւ կանայք և աղջկերք դժգոհութիւն արտայայտելին այդ առթիւ։ Եւ այժմ խմբագրութիւնը, «Խառն լուրեր» վերնագրի տակ կարող է համարում իւր գեղեցիկ գաստակարդից ընթերցողներին հաղորդելու, որ յիշեալ վէպի հերոսն ու հերոսուհին արդէն ամուսնացել են, ինչպէս իրենք էին ցանկանում։

*** Իտալացի Ֆօրտունատօ Մարիլլին Հռոմի և Նեապոլի միջև երկաթուղու ճանապարհին կորցրել է իտալական 1,200,000 լիրա։ Գանձուին իտամանում է 100,000 լիրա։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Հէ-նոյային գործակալութեան)

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 հոկտեմբերի.—Սենատը երէկ վճիռ կայացրեց Տուլայի նահանգական դատարանի նախկին նախագահ Կոլօկօլովի և դատարանի դատական պրիստաւ Պրուսակովի գործի վերաբերմամբ, որոնք մեղադրւում էին դատարանի շէնքի վերանորոգութեան միջոցին զեղծումները գործելու համար։ Կոլօկօլովը և Պրուսակովը դատապարտուած են պաշտօնազուրկ լինելու և բացի այդ Պրուսակովը 300 ր. տուգանքի, իսկ եթէ չունենայ փող, երեք ամսուայ բանտարկութեան։

ՎԵՆՆԱ., (Սեպհական թղթակից.), — Բերլինից «Fremdenblatt»-ին հաղորդում են, որ Ֆրիդրիխսրուհէում կայացած խորհրդակցութեան արդիւնքը խիստ գոհացուցիչ է։ Ուսուց Կայսրի Բերլին ուած այցելութեան հետևանքը, որի հետ եւրոպական խաղաղութեան պահպանութեան մասին նոր յոյսեր են կապուած, աւելի ևս գին ստացան իշ. Բիսմարկի և գրաֆ Կալնօկիի տեսակցութեամբ։ Գրաֆ Կալնօկին վաղը Վեննա կը վերադառնայ։

«Politische Correspondence»-ը հաղորդում է, որ գերմանական Վիլհելմ կայսրը Գերմանիա վերադառնալիս Ինսբրուքիում կը տեսակցի Ֆրանց-Յոզէֆ կայսրի հետ։ Տեսակցութիւնն, ինչպէս ասում են, մասնաւոր բնաւորութիւն կունենայ։

Տեղս ժամանեց Սերբիայի նախկին թագաւոր Միլանը, որ Բելգրադ է գնում։ Նա մտադիր է կիրակի Բելգրադ հասնել։ Այդ ուղևորութեան նպատակն է հաստատել Նատալիա թագուհու և խնամակալութեան միջև կայացած համաձայնութիւնը։

ԼՕՆԴՕՆ.—Վեննայից «Times»-ին հաղորդում են, որ հետևեալ հետևանքի է հանգել Վիլհելմ կայսրի Կ. Պոլիս արած ուղևորութիւնը.—առանձին խնդիրների մէջ չմտնելով, կայսրն աշխատում էր Սուլթանին համոզել, որ եռապետական դաշնակցութեան նպատակն է խաղաղութիւնը պահպանել, որը և աջողուել է նրան։ Գրաֆ Բիսմարկը մեծ-եպարքոսի հետ բանակցելիս բոլղարական կամ Կրետէի խնդիրների առթիւ ոչինչ մի այնպիսի առաջարկութիւն չէ արել, որ գերմանական կառավարութեան հոգս պատճառէր։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Նոյեմբերի 8-ին Կովկասի վիճուորական չրջանային խորհրդում աճուրդ է նչանակուած 1890/1 թուին մատակարարելու համար Պետրովսկի մինարանը 20,549 չետվերտ ալիւր, 2648 չետվերտ ձաւար և 250 հատ խոխլ։ Երբրւնդ՝ 2727 չ. ալիւր, 397 չ. ձաւար։ Բագու՝ 2905 չ. ալիւր, 384 չ. ձաւար։ Ուզուն-Ադա՝ 19,654 չ. ալիւր, 6706 չ. ձաւար և 8000 հատ խոխլ։ Ֆօրտ Ալէքսանդրովսկ՝ 816 չ. ալիւր և 146 չ. ձաւար։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային.	9 ժ. 3 վ. առ.
Բագու, »	12 ժ. 13 վ. ցերեկ.
Բաթում, մար. ապ. գն.	1 ժ. 54 վ. ց.
Ելիսաւետ. խառն գն.	8 ժ. 35 վ. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ.	10 ժ. 58 վ. կր.
Բագուից, »	7 ժ. 57 վ. առ.
Բաթումից, մար. ապ.	8 ժ. 20 վ. առ.
Ելիսաւետ. խառն գն.	8 ժ. 44 վ. կր.

«Նոր-Դար»-ի Օրացոյց.

1889 Թ. Փ.	Հոկտեմբ. 31 օր.	ՏՅԶԱՆ Հայկ. Թ.

28 —Շբ. բա.—Լս. 16. Ն. Տ. նոյ. 9. Սահմի 19. տօն Աթանասի, Կիւրեղի, Եփրեմի, Բարսղի, Յօհաննու.

29 —Կիր. բկ.—Լս. 17. Ն. Տ. նոյ. 10. Սահմի 20. Խաչի գիւտը.

30 —Բչ. գէ.—Լս. 18. Ն. Տ. նոյ. 11. Սահմի 21, Աբ. ծգ. 6 ժ. 46 ր. մուտքը 4 ժ. 42 ր.

31 —Գչ. գկ.—Լս. 19. Ն. Տ. նոյ, 12. Սահմի 22.

Նոյեմբեր 30 օր

1 —Դչ. դէ.—Լս. 20. Ն. Տ. նոյ. 13. սահմի 23.

2 —Եչ. զկ.—Լս. 21. Ն. Տ. նոյ. 14. սահմի 24. տօն Յովհաննու Ոսկերբանի.

2 —Ուբ. տէ.—Լս. 22. Ն. Տ. նոյ. 15. սահմի 25.

4 —Շբ. ակ.—Լս. 23. Ն. Տ. նոյ. 16. սահմի 26. տօն ամենայն սրբոց.—Վերջ. քա. լս. անհաստատ եղանակ. անձրև և պարզ։

5 —Կիր. բէ.—Լս. 24. Ն. Տ. նոյ. 17. սահմի 27.

6 —Բչ. բկ.—Լս. 25. Ն. Տ. նոյ. 18. սահմի 28. Մեռ. Ն. Կ. Բ. Նիկոլայ Նիկոլայևիչ Կրտսերին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՃՈՒԱՊԱՀ

Մի հայ երիտասարդ, որ հմուտ հաշուապահ է, ցանկանում է երեկոները ժամը 5-ից սկսած պարապմունք ունենալ չէշեալ առարկայից։ Հասցէն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։ 10—1

PAPIER FAYARD ET BLAYN

Գործ է ածւում ոսկրացաւը, շնչառական գործարանների գրգռումը, խարփուխը, կրծքի գրգռումը, ուռոյցքը, վէրքը, այրուածքը, մարմնի ցրտահարութիւնը, կոշտը և ամեն տեսակ մորթի պնդութիւնները բժշկելու համար։ Վաճառւում է բոլոր դեղատներում. (պահանջել սեպհական տորագրութիւնը)։ (Ц 37937) 20—1

ՄԻԱԿ
ԻՍԿԱԿԱՆ ԲԻՃԱԿ-ԿՈՒՆՅԻՆԵԱՆ ԽՈՏԱՅԻՆ
ԲԱԼԱՍԱՆ
Որի յատկութիւնը յայտնի է տիեզերքի բոլոր երկրներում և բժշկ. Դեպարտ. № 4899 «լաւ» է ընդունել։
ՄՕՍԿՈՒԱ
Գոյութիւն ունի 1845 թուից.
ՍԵԶՄԱԾ ԹԱԽՄՈՐ,
սիմֆոնիայից պատրաստած.
ՍՊԻՐՏ ԵԻ ՋՏԱԾ ԳԻՆԻ,
ՌՕՄ, ԿՕՆԵԱԿ, ԱՐԱԿ,
զանազան օդիներ, թուրմեր,
ԹՈՒՐՉԵՐ ԵԻ ԷՍՍԷՆՑԻԱՆԵՐ,
Ֆրանսիական օդիներ, կիմմել, արտասահմանեան լիկհօրներ և այլն։

Ա. ՎՕԼՖՇՄԻԴ ՐԻԳԱՅՈՒՄ

ԲՈԼՈՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԵԻ ԱՅԼ ՑՈՒՅԱՀԱՆԴԷՍՆԵՐՈՒՄ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ։
ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՑԱՒԻՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԳԻՆՎԱՁԱՒՆԵՐԻ ՄՕՏ։
Պրէյս-Կուրանթը ուղարկւում է չբեթէր։
(Բ.) 10—2

Дозволено цензурою. Тифлисъ, 27-го Октября 1889 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова